«ԵՐԵՎԱՆԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿ

ՀՀ ք.Երևան, Շիրակի 88/1
Հեռ. +37441-777-983
Էլ. հասցե՝ easm.himnark@gmail.com

ԵԼՖ-363

«03» դեկտեմբեր 2024թ.

«ԱՐՇԱՎԻՐ ԱՎՏՈ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ Գ. ԲՐՈՒՏՅԱՆԻՆ

Հարգելի՛ գործընկեր,

«Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի և «Արշավիր Ավտո» ՍՊԸ-ի միջև 2024 թվականի հունիսի 06-ին կնքված ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/29-3 (Համաձայնագիր՝ 07.08.2024թ.) ծածկագրով գնման պայմանագրի շրջանակներում (այսուհետ՝ Պայմանագիր) ապրանքների մատակարարման ժամկետը լրացել է 28.08.2024թ-ին: Համաձայն Ձեր գրության՝ 11-րդ, 24-րդ, 40-րդ, 41-րդ, 42-րդ չափաբաժինները չեն մատակարարելու:

26.06.2024թ. կնքված ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/35-4 (Համաձայնագիր՝ 07.08.2024թ.) ծածկագրով գնման պայմանագրի շրջանակներում ապրանքների մատակարարման ժամկետը լրացել է 28.08.2024թ-ին: Համաձայն Ձեր գրության՝ 23-րդ, 34-րդ, 53-րդ չափաբաժինները չեն մատակարարվելու:

25.07.2024թ. կնքված ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/39-3 (Համաձայնագիր՝ 29.08.2024թ.) ծածկագրով գնման պայմանագրի շրջանակներում ապրանքների մատակարարման ժամկետը լրացել է 19.09.2024թ-ին: Համաձայն Ձեր գրության՝ 24-րդ, 27-րդ, 37-րդ չափաբաժինները չեն մատակարարվելու:

Պայմանագիրի 1.1 կետի համաձայն Վաճառողը պարտավոր է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներով և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի N1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքները, իսկ Գնորդը պարտավոր է ընդունել ապրանքները և վճարել դրա համար: Համաձայն պայմանագրի՝ մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվելիք համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 21 (քսանմեկ) օրացուցային օրը, սակայն ընկերության կողմից չի պահպանվել պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և որոշ ապրանքների մատակարարումը չի իրականացվել:

Համաձայն Պայմանագրի 2-րդ մասի 2.1.7 կետի Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Հիմք ընդունելով վերոգրյալը «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկը միակողմանի լուծում է պայմանագիրը վորոնշյալ չափաբաժինների մասով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

Տեղեկացնում եմ, որ ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/29-3 ծածկագրով գնման պայմանագրի մասով Ընկերությունը պարտավոր է Պայմանագրի 6.5 կետի համաձայն վճարել

տուգանք պայմանագրի չմատակարարված ապրանքների գնի 0,05 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ 76727 (յոթանասունվեց հազար յոթ հարյուր քսանյոթ) ՀՀ դրամ, սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000698 հաշվեհամարին:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում Ընկերության կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը 291000 (երկու հարյուր ինսունմեկ հազար) ՀՀ դրամ և որակավորման ապահովումը 436500 (չորս հարյուր երեսունվեց հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ սահմանված կարգով կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրով սահմանված գումարները գանձապետական հաշվեհամարին փոխանցելու համար:

ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/35-4 ծածկագրով գնման պայմանագրի մասով Ընկերությունը պարտավոր է Պայմանագրի 6.5 կետի համաձայն վճարել տուգանք պայմանագրի չմատակարարված ապրանքների գնի 0,05 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ 159897 (հարյուր հիսունինը հազար ութ հարյուր ինսունյոթ) ՀՀ դրամ, սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000698 հաշվեհամարին:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում Ընկերության կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը 470000 (չորս հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ և որակավորման ապահովումը 705000 (յոթ հարյուր հինգ հազար) ՀՀ դրամ սահմանված կարգով կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրով սահմանված գումարները գանձապետական հաշվեհամարին փոխանցելու համար:

ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/39-3 ծածկագրով գնման պայմանագրի մասով Ընկերությունը պարտավոր է Պայմանագրի 6.5 կետի համաձայն վճարել տուգանք պայմանագրի չմատարարված ապրանքների գնի 0,05 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ 288802 (երկու հարյուր ութսունութ հազար ութ հարյուր երկու) ՀՀ դրամ, սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000698 հաշվեհամարին:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում Ընկերության կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը 2305000 (երկու միլիոն երեք հարյուր հինգ հազար) ՀՀ դրամ և որակավորման ապահովումը 3457500 (երեք միլիոն չորս հարյուր հիսունյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ սահմանված կարգով կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրով սահմանված գումարները գանձապետական հաշվեհամարին փոխանցելու համար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր

տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.

մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվի ՀՀ հառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ՍԱՇԱ ԿԱՏՎԱԼՅԱՆ**